



ԱՍՈՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

(Շար. տես յէջ 249)

ԱՍՈՐԻՈՑ նման նաև Հայք բառան-
գամ չափու բաժանման մէջ, ըսինք, Հնգա-
վանի կամ աւելի վանիկերէ կազմուած բա-
ռեր չեն ընդունիր, և թէ՛ մինչդեռ ասորա-
կան ոտանաւորի մէջ ամենին Հնգավանի

անգամ կամ չափ չի գտնուիր, բայց Հայ-
կականին մէջ ստէպ ստէպ թէ՛ միանգամ,
թէ՛ երկանգամ՝ և երբեմն նաև եռանգամ
տողեր իսկ կը գործածուին՝ Հնգավանի ան-
գամներէ բաղկացեալ: Զոր օրինակ.

Միանգամ հնգավանի. — Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեալ, և այլն:

Աշխարհ ամենայն,
Առ իս մայրցեալ,
Ախտակից լեռուք, և այլն:

Երկանգամ հնգավանի. — Որ յանդակելոյ / աթոռը նըստիս.
Որ յամարմնական / զօրացող զովիս.
Դասակցեալք ընդ զօրս / ամարմնականաց.
Անծիրք նըվրեալք / սիրոյմ Քրիստոսի.
Ի պարծամըս ձեր / բարձրացեալ տօնէ.
Յիս մարդասիրեա / բազմագութ փրկիչ,
Եւ փարատեցո՞ / զցաւս ամծին խոյ, և այլն:

Եռանգամ հնգավանի. — Ասաց ամբզգամ / ի սրբոյ իւրում / թէ ոչ գոյ Աստուած.
Յիշեա, Տէր, զորդիսն / Եղովմայ յատուքն / Երուսաղէմի.
Վասն թրջամեաց / իմոց սի՛ մատուներ / զիս ի ձեռս մեղաց.
Եւ ի մէջ ուռեաց / մոցա կախեցաք / զվտակարանըս մեր, և այլն:

Այս հնգավանի անդամներն ու տողերն Նախնիք խառն կը գործածեն ուրիշ չափով տողերու հետ թէ՛ շարականաց և թէ՛ մեղեդեաց ու տաղից մէջ, ինչպէս նաև ոչինչ ընդհատ Սուրբ Գրոց երգերու կամ օրհնութեանց ու Սաղմոսաց մէջ, եթէ հայկական յատուկ չափ մի չհամարենք զայն, անշուշտ պէտք ենք զօրցել որ փոխառութիւն մ'է եբրայական տաղաչափութենէն, յորում շատ ստեպ կը գործածուին հնգավանի անգամը, ըստ Պր Հուրբուր Գրիմիկի ուսումնասիրութեան: Բաղդատելով քանի մի Սաղմոսը և օրհնութիւնը Աստուածաշնչի հայկական թարգմանութեան՝ եբրայական բնագրին չափուց հետ (ըստ վերոյշեալ գերմանացի դիտնականին ըրած անգամատութեան), տեսայ որ այն տեղերը՝ ուր եբրայացւոյն մէջ աւելի առատութեամբ գործածուած են եռավանի կամ քառավանի անգամներով չափեր, նոյնները ջանացուած է ըստ կարելոյն ստեպ գործածել նաև հայկականին մէջ. իսկ ուր

եբրայերէնի մէջ հնգավանի անգամներով յօրինուած են՝ հայերէն թարգմանութեան մէջ ընդհանրապէս եռավանի ու հնգավանի և կամ քառավանի և երկավանի ու հնգավանի խառն անգամներով են կազմուած: Եւ որովհետև Սաղմոսաց թարգմանութիւնն հնազոյն կը համարուի Ս. Գրոց միւս մասերու թարգմանութենէն՝ և մեր Նախնեաց շարականներէն, ուստի կը հետևեցնենք որ հնգավանի չափն եբրայականին հետևութեամբ մուտք գտեր է առաջին անգամ Սաղմոսաց մէջ:

Բայց անշուշտ շատերը պիտի զարմանան և առարկեն թէ Սաղմոսներն հայերէն արաբա գրառքիւնք են և ոչ թէ ոտանաւոր: — Իսկ ես ընդհակառակն կը կրկնեմ՝ որ գրեթէ ծայրէ (versi sciolti) յօրինուած ոտանաւոր կամ չափական թարգմանութիւնք են, և համոզելու համար բաւական կը համարիմ ըստ դիպաց քաղել զանազան Սաղմոսներէ հետեւեալ չափերը.

4 + 3, 4 + 4, 3 + 4, 3 + 3

ես առ Աստուած կարդացի,
ես Տէր լուս իմ յերեկոյս (ԾԴ. 17):
Պատրաստ է սիրտ իմ, Աստուած,
Պատրաստ է սիրտ իմ օրհմել. (ԾԶ. 8):
Կամ խալան արգելցէ
Ձորորմութիւն իւր յիմէմ. (ՀԶ. 9):
Այլ ճեառն արար զօրութիւն,
Այլ ճեառն բարձր արար զիս. (ԾԺԷ. 16):

Յոյս իմ ի ստեանց մօր իմոյ.
Ի քեզ անկայ ես յարգամղէ. (ԻՆ. 10, 11):
Բուրբ ցըմծովիւմ ըզգեցցիմ,
ես ըզգեցցիմ խոյք մաքեաց. (ԿԴ. 14):
Միթէ ի գուն ինչ ըստեղծեր
Ձամեմայն որդիս մարդկամ. (ԶԸ. 48):
Ոչ թաքեալ ոսկը իմ ի քէմ
Ձոր արաքեր ի ծածուկ. (ՃԼԸ. 15):

3 + 3 + 3

Ոչ մըստայց ես յաթոռս մամրաց. (ԻԵ. 4):
Լըւացայց սըրբութեամբ ըզծեռս իմ. (ԽԵ. 6):
Ո արար ըզրեշտակս իւր հոգիս,
Ձալաշտոմնայս իւր ի հուր կիզելոյ. (ԾԳ. 4):
Ամը թրուումը երկնից քոյմըս դիցեմ. (ԾԳ. 12):
Նոչ ես որպէս տիկ ի պարզի. (ԾԺԸ. 83):
Երթալով երթալիմ և լալիմ
Ոյք բալածեալ տամէիմ զսերմամիս. (ԺԵԵ. 6):

3 + 4 + 3, 3 + 4 + 4, 4 + 4 + 3, 3 + 3 + 4

Ելիցիմ մոքա որպէս խոտ տամեաց,
Որ միմչեւ ի բուռն եկեալ՝ չորացաւ.
Ուստի ոչ ելից ըզբուռն իւր հըմծողմ,
Ոչ ըզգերկս իւր՝ որ զորայմ ժողովէր. (ԺԻԸ. 6, 7):

ի կարգալ իմում լրացի ինձ, Աստուած. (Դ. 2).
 Եւ թըմամոյն զէն պակասեաց մինչ իսպառ. (Թ. 7).
 Միմչեւ յէրբ, Տէր, մոռանաս զիս իսպառ. (ԺԲ. 1).
 Անդ երկիցեն զերկիւր ուր ոչ իցէ երկիւր. (ԺԳ. 5. ԾԲ. 6).
 Որ զընայ ամբիժ՝ գործէ զարդարութիւն (ԺԴ. 2).
 Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն (ԺԶ. 2).
 Միմչեւ ի ծագս աշխարհի եմ խօսք մոցա (ԺԸ. 5).
 Այլ ի կարգալ իմում առ մա՛ լրացի ինձ. (ԻԱ. 25).
 Մի՛ համարիւր ընդ ամբարիշտսն զամեն իմ (ԻԷ. 3).
 Մի՛ լիմիք որպէս ըզծիս եւ ըզշորիս,
 Զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն (ԼԱ. 9).
 Խորհուրդ սըրտի նորա յազգէ միմչեւ յազգ (ԼԲ. 11).
 Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր,
 Եւ րանիւ նորա երկիրն հաստատեցան (ԼԲ. 6).
 Եւ հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ (ԼԷ. 10).
 Եղեն ինձ արտասուք իմ կերակուր (ԽԱ. 4).
 Սուրբ է տաճար քո սրամէնի արդարութեամբ (ԿԴ. 6).
 Եւ սուրբ արար ըզյանրկս իւր Քարծնեալն (ԽԵ. 5).
 Ընդունիլ է մել Աստուած Յակովբայ (ԽԶ. 8).
 Միմչեւ յճրբ, Տէր, բարկամաս դու ի սպառ. (ԿԸ. 5).
 Իսկ արդ յիշեաւ և տնս թէ ո՛վ է իմ համգիստ (ՁԸ. 48).
 Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ. (ՂԱ. 8).
 Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի (Ղ. 6).
 Ոչ մերծեցաւ առ իս՝ որ թիւրն էր սըրտիւ (ժ. 3).
 Եւ զըմպեմ իմ արտասուք խառնեցի (ժԱ. 10).
 Նորոգեսցի որպէս արծուոյ մամկութիւն քո (ժԲ. 5).
 Մահման եղեր, և ոչ անցամեն (ժԳ. 9).
 Ես խոնարհ եղէ, և Տէր կեցոյց զիս (ժԴ. 6).
 Այս դուռն Տեառն է, և արդարք մշտանեն (ժԺ. 20).
 Այնպէս եմ աչք միւր առ քեզ, Տէր, Աստուած մեր (ժԻԲ. 2).
 Ահա լրաց զընթամէ յեփրաթա,
 Եւ զըտաք ըզմա ի դաշտն մայրեաց (ժԼԱ. 6).
 Երկիւրն քո զգեցցին զարդարութիւն,
 Եւ սուրբք քո ջընծալով ջընծասցեն (ժԼԱ. 9).
 Լուր, Տէր, ծայմի իմում, առ քեզ կարդացի (ԻԶ. 7).
 Օգտեցաւ և զուարմացաւ մարմին իմ (ԻԷ. 7).

5 + 5 + 5, 5 + 5

Ասաց ամըզգամն ի սըրտի իւրում՝ թէ ոչ գոյ Աստուած (ԺԳ. ԾԲ. 1).
 Օրհնեալ տէր Աստուած, որ ուսոյց ըզծեա իմ ի պատեբազմ (ժԽԲ. 1).
 Կարդացի առ քեզ բոլորով սըրտիւ իմով, լուր ինձ, Տէր (ժԺԸ. 145).
 Սիրեցից ըզքեզ, Տէր, զօրութիւն իմ, Տէր հաստատիւ իմ (ժԷ. 2).
 Ի կարգալ իմում լրացի ինձ, Աստուած, ըստ արդարութեան (Դ. 2).
 Քազումք ասէին թէ ո՛ր ցուցէ մեզ ըզբարութիւն Տեառն (Դ. 6).
 Զայր արիւմանեղ և ըզմենգաւոր պիղծ առնես դու, Տէր.
 Այլ ես ըստ բազում ողորմութեան քում մշտից ի սուռ քո (Ե. 7).
 Զարթիւր տէր Աստուած իմ ի հրամանս քո, զոր պատուիրեցեր (Է. 7).
 Դու, Տէր, պահեցեր զիս, ապրեցուցեր յազգէ յայսմանէ (ԺԱ. 8).
 Եւ ըստ բարօրութեան քում՝ մեծ արասցես դու զորդիս մարդկան (ԺԱ. 9).
 Զի զարդարութիւնք քո խընդրեցի (ժԺԸ. 145).
 Ըզմեղս ատեցի և ամարգեցի (ժԺԸ. 163).
 Զի զօրէմըս քո ես ոչ մոռացայ (ժԺԸ. 153).
 Բըլեկեսցեն շըրթունք իմ զօրհոսութիւնս քո (ժԺԸ. 171).
 Կարդային առ Տէր, և նա լսէր մոցա,

եւ ի սիւմ ամպոյ՝ խօսէր ընդ մոսա (ՂԸ. 7):
Տէր թագաւորեաց, ցրմծասցէ երկիր (ՂԶ. 1):
Ձխորհուրդ աղքատի յամօթ արարիմ (ԺԳ. 6):
Հաւածեսց ' ապա թըշնամիմ զամծմ իմ,
Հասցէ կոխեսցէ յերկիր ըզկեանու իմ,
եւ զփառս իմ ի հող ըրմակեցուցէ (է. 6):
Ժամանեցիմ իմծ որոզայթք մահու,
եւ վիշտք դըժոխտց պաշարեցիմ զիս (Ժէ. 6):

3 + 3 + 3 + 3

Իսկ ընդէր բարկացոյց մեղաւորըմ զԱստուած (Թ. 4, 13, կրկ.):
Ձի ահա մեղաւորք լարեցիմ զաղեղումս (Ժ. 3):
Որպէս կաւ գըռեհաց կոխեցից ըզմոսա (Ժէ. 43):
Օր աւուր բըղխէ զբան,
եւ զիշեր զիշերի ցուցամէ զգիտութիւն (ԺԸ. 4):
Ոչ երկեաց ի չարէ, զի դու, Տէր, ընդ իս ես (ԻԲ. 4):
Պատրաստ արարեր աւաջի իմ սեղան,
Բաժանկ քո որպէս ամապակ արբեցոյց (ԻԲ. 5):
Վաստակեա յաւիտեան և կեցցես միւշ իսպառ (ԽԸ. 10):
Բայց միայն Աստուծոյ հընազամդ լեր, ամծմ իմ (ԿԱ. 2):
Մի՛ ես եղիցիմ քեզ աստուածք առժամայմք (Զ. 10):
եւ ըոյմ արագլի ապաւէն է մոցա (ԺԳ. 17):
Որպէս զի քաղցր եմ ի քիմս իմ բանք քո (ԺԺԸ. 103):
եւ խորք խտովեցան ի ձայմէ ջուրց բազմաց (ՀԶ. 18):

4 + 4 + 4 + 4

(Եւ բազմազգի փոփոխութիւնք վանկից անդամոց այս դիւցապնական չափին)

Երանեալ է այր՝ ու ոչ զմաց ի խորհուրդս ամպարըշտաց (Ա. 1):
Երանի՛ մանեմցում՝ որք յուսացեալ եմ ի Տէր (Ա. 13):
Հովռեցես ըզմոսա զաւազամա երկաթեաւ (Բ. 9):
Ամաչեսցես և խտովեսցիմ յոյժ ամեմայն թըշնամիք իմ (Զ. 11):
Ըզտուր իւր ուրեալ է և զաղեղմ իւր լարեալ (է. 13):
Ըզուսիմ և զաստեղըս զորըս դու հաստատեսցեր (Ը. 4):
Ի խըմդըն զարիւմ մոցա՝ յիշեաց և ոչ մոռացաւ Տէր (Թ. 13):
Ձի զովի մեղաւոր ի ցամկութիւն ամծիմ իւրոյ (Թ. կրկ. 3):
Վարամի ի գաղտնիս՝ որպէս զառիւծ ի մորտջ (Թ. կրկ. 9):
Ի քեզ թողեալ է աղքատս, և որբոյմ դու ես օգնական (Թ. կրկ. 14):
Շըրթամբք հեմզաւորք սըրտէ ի սիրտ խօսեցաւ (ԺԱ. 3):
Պահեա զիս, Աստուած, զի ես ի քեզ յուսացայ (Ժէ. 2):
Ըսբամընիլ արարեր զամեմայմ կամս ի մոսա (ԺԵ. 3):
Ո՛չ ժողովեցայց ի ժողովըս մոցա (ԺԵ. 4):
Ձի է՛ ընդ աշմէ՛ իմմէ՛ զի մի՛ սասանեցայց (ԺԵ. 8):
Ո փըրկես զայմոսիկ՝ ոյք յուսացեալ եմ ի քեզ (ԺԶ. 7):
Խոնարհեցոյց զերկինս և էջ, մէջ ի մերթոյ ոտից մորա,
եւ ի քրովըւս և թլուեաւ, սըլացաւ մա ի թեւս հորովոց (Ժէ. 10):
Երկինք պատմեն զփառս Աստուծոյ,
եւ զարարածըս ձեռաց մորա պատմէ հաստատութիւն (ԺԸ. 2):
եւ ինքմ որպէս փեսայ՝ զի ելամէ յառազատէ (ԺԸ. 6):
Աստուած, Աստուած իմ, մայեաց առ իս, ընդէ՛ր թողեր զիս (ԻԱ. 2):
Դու ի սուրբըս ըրմակեալ ես, և զովեալ յիսրայիլի (ԻԱ. 4):
Մի՛ ի բացեայ առմիր յիմէմ, զի մեղութիւնք մերծեալ եմ (ԻԱ. 12):
եւ եղեւ սիրտ իմ որպէս մում հայեալ ի մէջ որովայնի (ԻԱ. 15):
եւ ի վերայ պատմումանի իմոյ վիճակս արկամէիմ (ԻԱ. 19):

Աստուած իմ, ի քեզ յուսացայ մի՛ ամաւելցից (ԻԴ. 3):
 Տէր ի կամքս քո ճտուր գեղոյ իմոյ զօրութիւն (ԻԹ. 8):
 Յերկմից մայեցաւ Տէր յամենայն ողորիս մարդկան (ԼԲ. 13):
 Յամենայն մեղութիւնէ մոցա փըրկեաց ըզմոտս (ԼԳ. 18):
 Ա՛ն ըզգէմ և զասպայս քո, և արի՛ յօգմիլ իմէ (ԼԴ. 2):
 Որպէս զեղբայր և զըմկեր՝ այնպէս հաճոյ լինի:
 Որպէս սգաւոր և տըղտում՝ այնպէս խոնարհ առնէի (ԼԴ. 14):
 Այդ ընդէ՛ր տըղտում ես, սնծմ իմ, կամ ընդէ՛ր խոտիս զիս (ԽԱ. 6, 12. ԽԲ. 5):
 Խորք ի խորոց կայդուցիմ առ քեզ՝ ի ձայն սահմանաց (ԽԱ. 8):
 Ի մարդոյ սեղաւորէ մեմզաւորէ փըրկեալ գիս (ԽԲ. 1):
 Ակամջօք մերովք լուսք, զոր հարըն միս պատմեցիմ մեզ (ԽԳ. 2):
 Կոչեաց զերկիր յարեւելից միմչեւ ի մոտս արեւու (ԽԹ. 2):
 Այս այր է՝ որ ո՛չ արար զԱստուած իւր օգնական (ԾԱ. 9):
 Պատկոխտք եղիցիմ և թաքթաքունք շըրջեսցիմ (ԾԵ. 7):
 Ահ և զողորսմ եկմ ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար (ԾԴ. 6):
 Ձի մի լուիցէ մա զձայն թովչի՛ մարտաւրի,
 եւ մի՛ առցէ դեղ՝ ի դեղատուէ՛ իմաստոյ (ԾԷ. 6):
 Յայեցանէ՛ որ յարուցեալ եմ ի վերայ իմ՝ ապրեցոր (ԾԸ. 2):
 Սովաքցիմ որպէս շունք և շըրջեսցիմ զքաղաքս (ԾԸ. 7):
 Բլուրք զըմութիւն ըզգեցցիմ, և ըզգեցցիմ խոյք մաքեաց (ԿԴ. 14):
 Տողակէզս ուղղալիցս մատուցից քեզ խոյովք (ԿԵ. 15):
 Եւ ըզմեղս մորա՛ յորթ և ի թի ծառայելոյ (Զ. 7):
 Եւ մի՛ երկիր պազամիցես դու աստուծոյ օտարի (Զ. 10):
 Աստուած, ո՛ քեզ մմանիցէ. մի՛ լռեր և մի՛ դապարեր (ԶԲ. 2):
 Ո՛րպէս սկրելի՛ եմ յարկք քո, Տէր զօրութեանց (ԶԳ. 2):
 Տէր Աստուած փըրկութեան իմոյ, ի տուէ կարդացի (ԶԷ. 2):
 Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութեամբ շինեսցի (ԶԸ. 3):
 Միմչեւ լերիմք հաստատեալ էիմ, միմչեւ ստեղծեալ զերկիր (ԶԹ. 2):
 Հուր առաջի մորա զմասցէ, այրեսցէ շուրջ ըզթըշմախս (ԶԹ. 3):
 Դասի՛ զաշխարհս արդարութեամբ և զօղորմութեամբ իւր ողորմութեամբ (ԴԷ. 9):
 Խոտտովան եղերուք Տեսում և օրհնեցէք զամուռ մորա (ԴԹ. 4):
 Մոռացայ ուտել ըզմայս իմ՝ ի ձայնէ հեծութեան (ԺԱ. 6):
 Ելումեմ լեռնաման և իջանեմ դաշտաման (ԺԳ. 8):
 Եւ ի վաստակըս ձեռաց իւրոց՝ միմչեւ յերեկոյ (ԺԳ. 23):
 Այս գործ է այնոցիկ՝ որ չարախօս կային զիմէմ (ԺԸ. 20):
 Ծով ետես և փախեաւ, և Յորդանան անդրէմ դարձաւ (ԺԹ. 3):
 Դանձ, ամծմ իմ, ի համզիստ քո, զի Տէր օգնեաց քեզ (ԺԹ. 7):
 Ի մերթեւըմ զըրդուեցայ, և եղէ մերծ ի գլորել (ԺԺ. 13):
 Երկրպաճք քո տեսցիմ զիս և ուրախ եղիցիմ (ԺԺԸ. 74):
 Որպէս մեղք հըզօրի՛ զի մըխեալ եմ կայծակամբք (ԺԺԹ. 4):
 Ամծմըք մեր ապրեցան որպէս ճըմճողակ յորդայթէ (ԺԻԳ. 7):
 Վաւմ ամուռն քո՝ համբերի, Տէր. համբեր ամծմ իմ բամի քում (ԺԻԹ. 4):
 Որպէս հրդուա Տեսում, և ուխտս եզ Աստուծոյ Յակովբայ (ՃԱ. 2):
 Թէ տանք քում աչանց իմոց, կամ միմջ արտեւանաց (ՃԱ. 4):
 Անէ. այս է համզիստ իմ՝ յախտեանս յախտեմից (ՃԱ. 14):
 Ըզլուսիմ և զաստեղս՝ իշխանական զիշերոյ (ՃԼԵ. 9):
 Որ աւաքեաց ըզհրեշտակ իւր և ամբարծ զիս ի հօտէ (Վերջին):

Այսքան բազմաթիւ օրինակներ յաճախեալ
 այն պատճառաւ է, որպէս զի չկարծէ մէկը
 որ ձրի խօսք մ՛ըսած եմ բովանդակ Սալ-
 մոսարանը ոտանաւոր գրուած Հոշակելով, և
 կամ չհամարուի թէ զիպուստական սակա-
 ւաթիւ տողեր լինին ասդին անպին ցրուած,

որք որ և իցէ ներդաշնակ արձակաբան նախ-
 նեաց գրուածոց մէջ ալ կրնան գտնուիլ: Մէջ
 բերած օրինակներու նայելով՝ շատ տեղ կը
 նշմարուի տաղաշափին արուեստական ճիշդ-
 որով կը ջանայ շնչաւորու և հանգիստեցնու
 փոփոխակի և գեղեցիկ զաստարութիւն տալ,

տեղ տեղ բառից կրկնութեամբ, տեղ տեղ շարագրութեան արտուղութեամբ և տեղ տեղ ալ դերանուանց զարգաբանութիւններով:

Սակայն կարծես դժուարաւ համոզուող առարկողի մը ձայնն ականջիս մէջ կը հնչէ, ըսելով՝ թէ վերոյիշեալ տողերն, թէ և գեղեցիկ յորինուած տողեր, բայց ասդիւն անդին ծաղկաբաղդ հաւաքուած են, և ուրիշ բան չեն ցուցնեն, բայց միայն այս՝ թէ Սաղմոսարանն յերաւի շատ ներդաշնակ շարագրութեամբ թարգմանուած է հայերենի մէջ. սակայն շատ հեռի է այդ յատկութիւնն այն աստիճանէն՝ որով մենք կարենանք ուղղման ներքո ոտանաւոր գրութեանց կարգը պատելու. վասն զի եթէ ուզենք փորձել ոտանաւորի տողերու բաժնելու ծայրէ ի ծայր ամբողջ սաղմոս մը, պիտի տեսնենք որ չափակաւ գրութենէ կատ օտար են, թէպէտ և բաժնելիք տողերնիս խառն տողեր (versi sciolti) լինին:

Այսպիսի առարկողաց կարճ և համոզիչ պատասխան տուած կը համարիմ՝ Սաղմոսներէն մէկ քանին, ըստ դիպաց առնելով, սպազրութեան ձեռքով վերածել չափական տողերու: ձևի ներքև, և ներկայացնել Բագմավիպիս յաջորդ թերթին մէջ:

Շարայարեղի

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ



Մ Խ Ի Թ Ա Ր

(Շար. տես էջ 297)

ՊԵՆԱՄԱՏ կապոյտ ջրերուն միջև Գոհարի նրման փայլէր լուսարեւ կըղզեակըն Սեւան՝ ոյր ափեր զըւարթ Պարէին ի բոյր ծաղկանց բարդ ի բարդ:

Թեւ թեւի տըւած սոխակն ու զեփեւ՝ Մին կը յորինէր զայլայլիկներ բիւր, Միւսըն կապուտակ ջրերուն երես Կը փրթթեցընէր ժպտիտներ պէսպէս:

Լուսինն ալ հրեմն ըլմայլած վերէն Սեւանց երգերուն՝ գուրս կ'ելլէր բոյնէն Եւ կապոյտ ալեաց միջև ծրփծրփուն Լըռիկ կը դիտէր իր ցեղեցիկութիւն:

Թեւ թեւի տըւած զայլայլիկն ու բոյր Թըռան կըտրեցին ճանապարհներ բիւր, Եւ փրփրաւորով մէկու մ՝ ականջին իրենց հայրենիքը դարձան կըրկին:

Դիւթուեցաւ, զոյներ առաւ խընգութեան Այն անձըն ցաւած հօգովք գանազան . . . Բայց ինչպէս սրանալ անոնց ետեւէն, Խըցուած էր ճանապարհ իր ամէն կողմէն:

Բայց գու, ո՞վ անընդ աչք ամենատես՝ Որ թըռուածներուն վըրան կը հըսկն, Մանուաղի անոնց ոյք անմեղ անյանց Հեծեն ի ներքոյ բըռնաւոր տերանց:

Մ'ն, ցըրուէ՛ վանէ՛ այդ ամբաւ խոչեր, Որ հէք պատանոյն ճանապարհն են բըռներ. Ու տար զինքն հասցոր ի Սեւան կըղզին Ուր լըսէ անձաւ չըքնաղ Եղիցիւն...

Կու գար կը հասնէր արդ յԷջմիածին Միւթմար պատանոյն ծանօթներէն մին, Ստեփանոս անուն՝ զայր ուխտի համար, Եւ պիտի անկից ի Սեւան երթար:

Ցընծաց յամաղիր եղաւ Մըխիթար, Մեկնիլ անոր հետ գաղտուկ ծածկաբար. Բայց կը վարանէր, ինչ հընար զըտնել Հաճել կարելի չէր ըլմեքայէ:

Ինչ կը տատամնիս, զընա՛ Մըխիթար Սուրբ Էջմիածինն առ մատակարար, Բարեհամբոյր մարդ մ'է նա զըթասէր. Գնա պատմէ՛ իրեն ցաւերդ ու իղձեր:

Նա քեզ պիտ' ըլլայ պաշտպան օգնական Ու սորվեցընէ փախչելու ճամբան... Ինչ ունիս չունիս փութա ժողովէ, Մանօթը արդէն քեզ մօտ գիւղի ըսպառէ:

Դեռ մալթ էր կանուխ եղաւ Մըխիթար, Ունեցածն առաւ ընկաւ ճանապարհ,